ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի N որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԷՋԸ
1.	Ներածություն	3
2.	Ընդհանուր իրավիճակ	4
3.	Ծրագրի նպատակը	19
4.	Ծրագրի խնդիրներից բխող միջոցառումներ (գործողություններ)	21
5.	Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիր	25
6.	Խորհրդատվական, իրազեկման (առկա/հեռավար) գործառույթների ժամանակացույցներ (Աղյուսակներ NN 1, 2)	28

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան ծրագիր

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) գործունեության 2021 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) կազմվել է՝

- ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և կրթության բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի՝ կրթության բնագավառին վերաբերող դրույթներով, Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով.
- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված տեսչական մարմնի կանոնադրության պահանջները.
- հիմք ընդունելով տեսչական մարմնի նախորդ տարիների գործունեության արդյունքների վերլուծական տվյալները, վերահսկողական գործառույթների արդյունքում հայտնաբերված խախտումների, ինչպես նաև տեսչական մարմնում ստացված տեղեկատվության հիման վրա հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) վերագնահատված ռիսկերը, դրանց կառավարումը.
- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային համավարակի և ռազմական դրության հետևանքները:

2. Ընդհանուր իրավիճակ

Հայաստանում կրթությունը հանդիսանում է ռազմավարական ոլորտներից մեկը, և հետևաբար՝ կրթական համակարգի զարգացումը, կրթության որակի շարունակական բարելավումը երկրի զարգացման հիմնական ուղղություններից են:

Ուսումնական հաստատությունների կրթական գործունեության կազմակերպման, կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը, կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը կարևոր նշանակություն ունեն կրթության որակի, արդյունավետության բարձրացման համար: Սակայն 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ տեսչական մարմինն իր ռեսուրսների մի մասն ուղղեց ՀՀ պարետի 18.08.2020թ. «Հայաստանի հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և կանոնների վերաբերյալ» №253-Ն որոշման Հավելված N 11-ով («Անվտանգության կանոններ նախադպրոցական կրթության ոլորտի կազմակերպություններում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով») սահմանված կանոնների պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողությանը (մշտադիտարկումներին), ապա նաև ռազմական դրությամբ պայմանավորված՝ վերահսկողական գործառույթները փոխարինվեցին Հայաստանի Հանրապետությունում հեռավար և առկա հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ամենօրյա աջակցման և խորհրդատվական միջոցառումներով:

Վերոնշյալ միջոցառումների շրջանակում տեսչական մարմնի կողմից Երևան քաղաքի համայնքային և ոչ պետական, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացվել են ընդհանուր թվով **1086** մշտադիտարկումներ: Ըստ մշտադիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմված արձանագրությունների, և ելնելով անվտանգության կանոնների խախտումները վերացնելու անհրաժեշտությունից՝ ՀՀ պարետին են ներկայացվել ՀՀ 15

մանկապարտեզների գործունեության ժամանակավորապես կասեցումների վերաբերյալ առաջարկություններ: ՀՀ պարետի համապատասխան որոշումներով ժամանակավորապես կասեցվել է նշված 15 մանկապարտեզների գործունեությունը (3-ից 5-ական օր տևողությամբ):

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի և տեսչական մարմնի աշխատակիցների կողմից համատեղ ստուգայցեր են իրականացվել Երևանի 126 դպրոցներ և 24 մանկապարտեզներ:

«Երեխաների անվտանգության և դիմակայունության ամրապնդումը ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների դպրոցներում» ծրագրի շրջանակներում, «Միացյալ Թագավորության Հակամարտային կայունության և անվտանգության հիմնադրամի» ֆինանսավորմամբ, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամի համագործակցությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) առկայության պայմաններում ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների 15 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթական գործընթացի (կրթության անվտանգություն, մատչելիություն) կազմակերպման որակի նկատմամբ մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների արդյունքների վերլուծության արդյունքում կրթական գործընթացի մասնակիցներին, շահառուներին ներկայացվել են կրթության կազմակերպման անվտանգության, մատչելիության ապահովման վերաբերյալ առաջարկություններ:

2020 թվականին թե՛ նախադպրոցական կրթության, թե՛ հանրակրթության ոլորտներում իրականացված ստուգումների արդյունքում առավել ռիսկային է համարվել տնօրենի գործունեությունը:

Ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների համաձայն՝ «Տնօրենին ներկայացվող պահանջներին ուղղված ստուգումների» ստուգաթերթով ձևավորված ռիսկի կշռային միավորը նախադպրոցական կրթության ոլորտում կազմել է ընդհանուր ռիսկի կշռային միավորների հանրագումարի 68.9 %-ը, հանրակրթության ոլորտում՝ 60.1 %-ը:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկային միավորների գերակշռող մասը ձևավորվել է «Տնօրենին ներկայացվող և կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումների» ստուգաթերթով իրականացված ստուգումների արդյունքում՝ 42.4 %: Այս ստուգաթերթի համաձայն խախտումներ արձանագրվել են հաստատությունների 57 %-ում, մինչդեռ՝ «Նախնական մասնագիտական և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելության կարգերի պահանջների կատարմանն ուղղված ստուգումների» ստուգաթերթի համաձայն ձևավորված կշռային միավորը կազմել է ընդհանուր կշռային միավորի 20.6 %-ը, իսկ խախտումներ արձանագրվել են հաստատությունների 71 %-ում: Ուստի նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկային են նաև սովորողների ընդունելությանը վերաբերող գործառույթները:

Սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով միայն 2020 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության 9 հանրակրթական դպրոցներում իրականացված ստուգումների ընթացքում է հնարավոր եղել տալ գրավոր աշխատանքներ կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով: Ինչպես նախատեսված էր 2020 թվականի գործունեության ծրագրով, գրավոր աշխատանքներ տրվել են «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա» առարկաներից («Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, «Հայոց լեզու» առարկայից՝ թելադրություն (նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան), իսկ «Ինֆորմատիկա» առարկայից՝ թեստ): Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են VII–IX դասարաններում, միջնակարգ դպրոցներում՝ VII–XI, իսկ ավագ դպրոցներում՝ XI դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվել են նաև նույն սովորողների նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները:

«Հայոց լեզու» առարկայի թելադրությանը մասնակցած 1004 սովորողներից «անբավարար» են գնահատվել 355-ը (35%), «բավարար»՝ 293-ը (29%), «լավ»՝ 248-ը (25%), «գերազանց»՝ 108-ը

(11%): Միջին գնահատականը կազմել է 5 միավոր (10 միավորային սանդղակում): 2018 թվականին իրականացված ստուգումների ընթացքում ձևավորված համապատասխան ցուցանիշը կազմել է 4.9 միավոր, 2019 թվականին՝ 5.8 միավոր:





«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 959 սովորողներից «անբավարար» են գնահատվել 454-ը (47%), «բավարար»՝ 364-ը (38%), «լավ»՝ 97-ը (10%), «գերազանց»՝ 44-ը (5%): Միջին գնահատականը կազմել է 4 միավոր (10 միավորային սանդղակում): 2018 թվականին իրականացված ստուգումների ընթացքում ձևավորված համապատասխան ցուցանիշը կազմել է 3.8 միավոր, 2019 թվականին՝ 4.4 միավոր:





«Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքին մասնակցած 965 սովորողներից «անբավարար» են գնահատվել 151-ը (16%), «բավարար»՝ 568-ը (59%), «լավ»՝ 217-ը (22%), «գերազանց»՝ 29-ը (3%): Միջին գնահատականը «Ինֆորմատիկա» առարկայի թեստային աշխատանքից կազմել է 5,2 միավոր:





«Ինֆորմատիկա» առարկայից գրավոր աշխատանքներ տրվել են միայն 2020 թվականին իրականացված ստուգումների ընթացքում: Գրավոր աշխատանքների արդյունքները ցույց են տալիս, որ վիճակը ավելի լավ է «Ինֆորմատիկա» առարկայի դեպքում: Իհարկե, պատկերը կարող էր այլ լինել 2020 թվականի ստուգումների ծրագրով նախատեսված բոլոր դպրոցներում տրված գրավոր աշխատանքների դեպքում: Այնուամենայնիվ, նախորդ տարվա հետ համեմատելով՝ տեսնում ենք, որ միջին գնահատականը 2020 թվականին նվազել է թե՛ «Հայոց

լեզու» առարկայի թելադրության, թե՛ «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի դեպքում:

Իրականացված ստուգումների շրջանակում դպրոցների կրթական գործընթացը գնահատվել է ըստ կրթության որակի գնահատման ձևաթղթերի (այսուհետ՝ ձևաթուղթ): Ձևաթուղթը բաղկացած է «Տնօրեն», «Կառավարման խորհուրդ», «Ուսուցիչ», «Ուսումնական միջավայր», ինչպես նաև «Սովորողի կողմից ուսուցչի գործունեության գնահատման հարցաթերթ» և «Ծնողի հարցաթերթ» հավելվածներից:

Ստուգումների արդյունքում գնահատվել են դպրոցի տնօրենի, VII-IX (ավագ դպրոցներում՝ XI) դասարաններում դասավանդող «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա» առարկաների ուսուցիչների գործունեությունը և դպրոցի ուսումնական միջավայրը:

Յուրաքանչյուր հավելվածում գնահատման սանդղակը բաղկացած է 5 մակարդակից՝ «գերազանց», «շատ լավ», «լավ», «բավարար», «անբավարար»:

Ուսուցիչներից յուրաքանչյուրի դասավանդած VII-IX (ավագ դպրոցներում՝ XI) դասարանների սովորողների առնվազն 30%-ի կողմից լրացվել են սովորողի կողմից ուսուցչի գործունեության գնահատման հարցաթերթերը: Նույն դասարանների սովորողների ծնողների կողմից (անանուն) լրացվել են հաստատության կրթական գործունեության վերաբերյալ հարցաթերթիկներ:

Միաժամանակ VII-IX (ավագ դպրոցներում՝ XI) դասարաններում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու», «Հանրահաշիվ», «Ինֆորմատիկա» առարկաներից: «Հայոց լեզու» առարկայից տրվել է թելադրություն, «Հանրահաշիվ» առարկայից՝ գրավոր առաջադրանք, «Ինֆորմատիկա» առարկայից՝ թեստային աշխատանք: Ուսումնասիրվել են նաև նույն դասարանների սովորողների՝ նախորդ ուսումնական տարվա վերոնշյալ առարկաների ամփոփիչ գրավոր աշխատանքների արդյունքները:

Դպրոցների կրթական գործընթացի գնահատման արդյունքները վերլուծվել են յուրաքանչյուր դպրոցի մասով և ուղարկվել համապատասխան դպրոցի տնօրենին:

Վերլուծություններում առանձնացվել են հաստատություններում *արդյունավետ իրականացվող* և *զարգացման ենթակա* գործառույթները:

Ելնելով գնահատման արդյունքներից՝ տնօրեններին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել զարգացման ենթակա գործառույթները (բնութագրիչները) բարելավելու, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները կատարելու ուղղությամբ:

Կառավարման խորհուրդներին (այսուհետ՝ խորհուրդ) առաջարկվել է գործունեության ընթացքում պահպանել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները:

Գնահատված դպրոցներում զարգացման ենթակա հիմնական գործառույթները (բնութագրիչներն) են՝

Խորհուրդ

- Խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ չի ներկայացնում:
- Խորհուրդները տնօրենի ընթացիկ գործունեության, դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության, զարգացման ծրագրի կատարման նկատմամբ ընթացիկ վերահսկողության արդյունքում տնօրենին առաջարկներ կամ հանձնարարականներ տալու անհրաժեշտություն չեն տեսնում:
- Տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության շրջանակում կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ տեսչական մարմնի կողմից դպրոցի տնօրենին տրվել են հանձնարարականներ, սակայն կատարողականը չի քննարկվել խորհրդի կողմից:
- Խորհուրդը դպրոցի ներքին գնահատման հաշվետվության, կրթության որակի բարձրացմանն ուղղված գործունեության վերաբերյալ քննարկումներ չի կազմակերպում, առաջարկություններ չի ներկայացնում: Խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործունեությունը որոշ դեպքերում գնահատվել է «Անբավարար»:

➢ Ստուգումների արդյունքում հայտնաբերվել են խորհրդի գործունեությանը վերաբերող այլ խախտումներ:

Տնօրեն

➢ Դպրոցի ցածր առաջադիմությամբ (4-6 միավոր) սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ՝ երկրորդում աճել է:

➢ Ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 41%-ից ավելի:

➢ Ստուգումների ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 30%:

➢ Ստուգումների ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի համեմատ ավելի ցածր է:

➢ Առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը հիմնականում մարզային փուլում որևէ հաջողություն չի արձանագրել:

➢ Ստուգումների ընթացքում գնահատված ուսուցիչները չեն մասնակցել կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների, չունեն գիտամանկավարժական հոդվածներ:

➢ Գնահատման արդյունքում «Գերազանց» գնահատված ուսուցիչներ չկան:

➢ Ուսումնական միջավայրն անհրապույր է:

➢ Ստուգումների արդյունքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների այլ խախտումներ:

Նկարագրված իրավիճակով պայմանավորված՝ տեսչական մարմինը 2021 թվականը սահմանում է որպես անցումային և վերականգնողական գործառույթների տարի:

Մասնավորապես.

1. 2021 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումներն իրականացվելու են նոր ձևաչափով. տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում առկա խնդիրների **բազմաշերտ ախտորոշման** նպատակով կիրառվելու են առկա բոլոր ստուգաթերթերը: Տեսչական մարմնի ստուգում իրականացնող ստորաբաժանումների մարդկային ռեսուրսների և համապատասխան ոլորտների ուսումնական հաստատությունների ոչ համաչափ համամասնության պատճառով (հնարավոր չէ բոլոր ստուգաթերթերը կիրառել ոլորտի բոլոր հաստատություններում) ստուգաթերթերը բաժանվել են բովանդակային փաթեթների՝ ըստ սահմանված թիրախների: Փաթեթներում առկա են բազային 1 կամ 2 ստուգաթերթեր (բոլոր փաթեթներում կիրառվող): Հանրակրթության ոլորտի 4 փաթեթներում ներառված են 6 կամ 7, նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտների 3 փաթեթներում՝ 4-ական ստուգաթերթեր: Բոլոր փաթեթներում գործածվող ստուգաթերթերը միասին ծածկում են համապատասխան ոլորտում կիրառվող ստուգաթերթերի ողջ տիրույթը: Փաթեթներից յուրաքանչյուրով ստուգումներ կիրականացվեն համապատասխան ոլորտների առնվազն 8 ուսումնական հաստատություններում:

Ստուգաթերթերի փաթեթներն ունեն տրամաբանական փոխկապակցվածություն: Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում դրանք 4-ն են:

N	Ստուգաթերթերի փաթեթներ	Թիրախ
1.	NN 01, 03, 04, 06, 07, 14	*Հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման, խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական և աշակերտական խորհուրդների) վարչական աշխատողների գործունեության իրավաչափությունը*
2.	NN 01, 02, 03, 04, 05, 08, 09	*Դպրոցավարություն և կադրային քաղաքականություն*
3.	NN 01, 02, 03, 04, 14, 15	*Կրթական գործընթացի կազմակերպում*
4.	NN 01, 03, 10, 11, 12, 13	*Սովորողների շարժ՝ ընդունելության, տեղափոխման, դասարանից դասարան փոխադրման (ներառյալ՝ էքստեռն կարգով), ավարտման գործընթացների նկատմամբ վերահսկողություն*

Ինչպես արտահայտված է աղյուսակում՝ հանրակրթության ոլորտի բոլոր փաթեթներում կրկնվում են **N1** և **N3** ստուգաթերթերը: **N1** ստուգաթերթը վերաբերում է հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներին, իսկ **N3**-ը՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող պահանջներին ուղղված ստուգումներին:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կիրառվելու է նույն մոտեցումը: Այստեղ ստուգաթերթերի փաթեթները 3-ն են:

N	Ստուգաթերթերի փաթեթներ	Թիրախ
1.	NN 01,02,06,09	*Կրթության կառավարում*
2.	NN 02,03,05,07	*Կրթական գործընթացի կազմակերպում*
3.	NN 02,04,05,08	*Սովորողների շարժ*

Ինչպես արտահայտված է աղյուսակում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների բոլոր փաթեթներում

կրկնվում է N2 ստուգաթերթը: Այն վերաբերում է նախնական մասնագիտական և (կամ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում տնօրենին ներկայացվող և կրթության կազմակերպման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն ուղղված ստուգումներին:

Բազային են ընտրվել նշված ստուգաթերթերը ոչ միայն այն պատճառով, որ ուսումնական հաստատությունում կրթության որակի անմիջական պատասխանատուն տնօրենն է, այլև կրթության որակի վրա անմիջական ազդեցություն ունեցող, կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կարգավորումները ներառված են այս ստուգաթերթերում (ուսումնական պլան, լիցենզիա և այլն):

Տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված այն հաստատություններում, որտեղ արդեն իսկ տեսչական մարմնի կողմից ստուգումներ իրականացվել են, ստուգաթերթերի փաթեթի ընտրությունը կկատարվի նախորդ ստուգման ընթացքում ռիսկայնության ամենամեծ կշռային միավոր ունեցող ստուգաթերթով: Եթե դա իրենից կներկայացնի բազային ստուգաթերթը, ապա՝ հաջորդ ամենամեծ կշռային միավոր ունեցող ստուգաթերթով:

Այն ուսումնական հաստատություններում, որտեղ տեսչական մարմնի կողմից ստուգում կիրականացվի առաջին անգամ, ստուգաթերթերի փաթեթը կընտրվի՝ հաշվի առնելով որոշակի առանձնահատկություններ՝ կրթական ծրագրի տեսակ, դիմում-բողոք, լրացուցիչ տեղեկություն:

2. Նախադպրոցական կրթության ոլորտում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով ստուգվող հաստատություններից առնվազն 12-ում (առնվազն 30%) կիրականացվի անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն՝ ըստ լրամշակված գործիքակազմի:

3. Հանրակրթության ոլորտում իրականացվող ստուգումների ընթացքում **6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին** կտրվեն գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից: Գրավոր աշխատանքների միջոցով կստուգվեն սովորողների **2018-2019, 2019-2020 ուսումնական տարիների մնացորդային գիտելիքները**[1]**:**

Արդյունքների համեմատական պատկերը կներկայացվի հաշվետվություններում: Ըստ անհրաժեշտության՝ կներկայացվեն համապատասխան առաջարկություններ:

4. Հանրակրթության ոլորտի ստուգվող ուսումնական հաստատություններից առնվազն 15-ում (առնվազն 30%) կիրականացվի կրթական գործընթացի գնահատում (*կրթության որակը, կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում, հաստատության դիմակայունությունը տարատեսակ աղետներին*)՝ համաձայն լրամշակված գործիքակազմի: Կրթական գործընթացի գնահատման համար կընտրվեն նվազագույնը 200 սովորող ունեցող ուսումնական հաստատությունները:

5. Հանրակրթությունը, համավարակով պայմանավորված, հեռավար կազմակերպելու պարագայում տեսչական մարմնի կողմից, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն հեռավար

[1] Նկատի առնելով 2020 թվականի աննախադեպ իրադարձությունները՝ Կորոնավիրուսային (COVID-19) հիվանդությամբ պայմանավորված՝ հանրակթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթությանն անցումը և ռազմական դրությամբ պայմանավորված սահմանափակումները, տեսչական մարմինը նպատակահարմար է գտնում սովորողներին տրված գրավոր աշխատանքների արդյունքների վրա ռիսկային միավոր չկիրառել/չհաշվարկել: Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ստուգաթերթով նախատեսված հարցերի շրջանակը ընտրելու՝ տեսչական մարմնի իրավունքը՝ տեսչական մարմնի ղեկավարի ստուգման հրամանում չի ներառվի 3-րդ ստուգաթերթի 56-րդ հարցը («56. Ստուգման ընթացքում տեսչական մարմնի կողմից տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների տոկոսային թիվը մինչև 40% է»):

կրթության կազմակերպման արդյունավետության նկատմամբ մշտադիտարկումներ (ուսումնասիրություն):

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների ուսումնական հաստատություններում ապագա մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի վերահսկման և բարելավման նպատակով կմշակվի կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմ, որը կփորձարկվի ստուգվող ուսումնական հաստատություններից առնվազն 6-ում (առնվազն 20%):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում գնահատումը կիրականացվի՝ ըստ հետևյալ մասնագիտությունների՝	
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտ	***Միջին մասնագիտական կրթության ոլորտ***
Վարսահարդարում և խնամք	***Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն***
Հյուրանոցային և ռեստորանային սպասարկում	***Երաժշտություն և կատարողական արվեստ***
Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն	***Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն***
Կիրառական արվեստ	***Կառավարում և վարչարարություն***
Ինֆորմատիկա	***Ինֆորմատիկա***
	Ստոմատոլոգիա

7. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների՝ Արցախից տեղափոխված սովորողների կրթության իրավունքի իրացման նկատմամբ կիրականացվի

վերահսկողություն կրթական նոր միջավայրում նրանց ինտեգրմանը, հոգեբանական ներգրավմանը աջակցելու նպատակով:

Մասնավորապես՝

ա) տեսչական մարմինը բոլոր տիպի հաստատությունների մասով (բացառությամբ՝ նախադպրոցական), սահմանված պարբերականությամբ, կպահանջի տեղեկատվություն արցախցի սովորողների՝ ՀՀ ուսումնական հաստատություններում ընդգրկված լինելու (շարժի) վերաբերյալ.

բ) ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում (բացառությամբ՝ նախադպրոցական) արցախցի սովորողների առկայության դեպքում կիրականացվեն կրթական կարիքների վերաբերյալ հարցումներ սովորողների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնական հաստատության մանկավարժական և վարչական կազմի հետ:

Ստուգվող ուսումնական հաստատություններում Արցախից տեղափոխված սովորողների բացակայության դեպքում ուսումնասիրությունը կիրականացվի պատահական ընտրությամբ այն հաստատություններոմ, որտեղ համաձայն լիազոր մարմինների տրամադրած տեղեկատվության՝ արցախցի սովորողների թիվը համեմատաբար ավելի մեծ կլինի.

գ) բովանդակային ստուգումների ընթացքում «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաներից գրավոր աշխատանք հանձնարարելիս և դրանց արդյունքներն ամփոփելիս արցախցի սովորողների արդյունքներն ըստ անհրաժեշտության կառանձնացվեն ուսուցիչների օգնությամբ լրացուցիչ ուսուցում ապահովելու նպատակով:

8. Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության առկա բացերի հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ տեսչական մարմինը կշարունակի 2020 թվականին նախաձեռնած՝ «**Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին**» ՀՀ օրենքի հայեցակարգի և օրենքի նախագծի մշակման հետ կապված աշխատանքները:

9. Համաձայն ծրագրում ներառված ժամանակացույցների՝ կիրականացվեն կանխարգելիչ, իրազեկման, խորհրդատվական միջոցառումներ:

Թե՛ կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական, թե՛ վերահսկողական գործառույթների ընթացքում տեսչական մարմինը հետևողականություն կդրսևորի Արցախից ներգաղթած սովորողների կարիքների, խնդիրների նկատմամբ: Նշված միջոցառումների ընթացքում անդրադարձ կարվի COVID-19-ի առկայության պայմաններում կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին:

10. Տեսչական մարմինը, համագործակցելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինների և կազմակերպությունների հետ, իր լիազորությունների շրջանակներում կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ օժանդակելու արցախա-ադրբեջանական պատերազմի արդյունքում Արցախի հանրակրթության բնագավառին հասցված վնասների հետևանքները հաղթահարելու ուղղությամբ (մեթոդական, իրավական, խորհրդատվական, հոգեբանական և այլ աջակցություն):

3. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը բխում է տեսչական մարմնի կանոնադրական նպատակներից և խնդիրներից:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև՝ նշված ոլորտներում կանխարգելիչ, իրազեկման, խորհրդատվական միջոցառումների իրականացումը:

Ծրագրի նպատակն է՝

արդյունավետ վերահսկողության միջոցով վեր հանել հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության վրա 2020 թվականի հասցրած անմիջական (կարճաժամկետ) վնասները, նախանշել դրանց հաղթահարման ուղիները

Նախադպրոցական կրթության ոլորտ	Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ
Անվտանգ և հասանելի կրթադաստիարակչական միջավայրի ապահովում	**Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետություն և դիմակայունության ապահովում**	**Կրթական գործընթացի կառավարման և կազմակերպման արդյունավետության ապահովում**
Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով սպուգվող հաստատություններից առնվազն 12-ում (առնվազն 30%) անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն՝ ըստ լրամշակված գործիքակազմի	*Կրթական գործընթացի գնահատում (կրթության որակը, կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում, հաստատության դիմակայունությունը տարատեսակ աղետներին) սպուգվող հաստատություններից առնվազն 15-ում (առնվազն 30%)՝ համաձայն լրամշակված գործիքակազմի*	*Ապագա մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի վերահսկման և բարելավման նպատակով կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմի մշակում և փորձարկում սպուգվող հաստատություններից առնվազն 6-ում (առնվազն 20%)*

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարող	Համակատարող	Ժամկետ	Աշխատանքի արդյունքի ձև
1.	Ստուգումներ ՀՀ 40 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Կրթադաստիարակչական միջավայրին պատճառված վնասի հատկորոշում, հետևանքների վերացման ապահովմանը աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ, ՌԳՍՊՎԳՎ	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	Լրացված սուգաթերթեր, ակտ կամ տեղեկանք, գրություն, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), վերլուծություն եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, վերագնահատված ռիսկերի բազա
2.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի կազմակերպման որակի (կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում) ձևաթղթերի լրամշակում	Լրամշակված գործիքակազմ	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	Հունվար, փետրվար	Լրամշակված գործիքակազմի կիրառում
3.	Ստուգվող նախադպրոցական ուսումնական հաստատություններից առնվազն 12-ում կրթական գործընթացի կազմակերպման որակի գնահատում (կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում)	Ավելի անվտանգ կրթադաստիարակչական միջավայր	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	I, II եռամսյակներ	Լրացված ձևաթղթեր, վերլուծություն եռամսյակային, տարեկան հաշվետվություններում

4.	Ստուգումներ ՀՀ 45 հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ դպրոց)	Կրթության արդյունավետ կազմակերպմանը (ներառյալ՝ ուսուցմանը, ուսումնառությանը) պառճառված վնասի հատկորոշում, հետևանքների վերացման ապահովմանը աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ, ՌԳՍՊՎԳՎ	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	Լրացված սուգաթերթեր, ակտ կամ տեղեկանք, գրություն, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), վերլուծություն եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, վերագնահատված ռիսկերի բազա
5.	Ստուգվող դպրոցներում 6-րդ, 9-րդ, 11-րդ դասարանների սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում «Մաթեմատիկա» (հանրահաշիվ, երկրաչափություն) առարկայից	Ուսումնառության որակի բարելավում, չափորոշչային պահանջի իրացման գնահատում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	Գրավոր աշխատանքների տարբերակներ, լրացված ձևաթղթեր, արդյունքների ամփոփ պատկեր եռամսյակային և տարեկան հաշվետվություններում
6.	Կրթական գործընթացի գնահատման (կրթության որակը, կրթության կազմակերպման անվտանգությունը և մատչելիությունը COVID-19-ի առկայության պայմաններում, հաստատության դիմակայունությունը տարատեսակ աղետներին) գործիքակազմի լրամշակում	Լրամշակված գործիքակազմ	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	I եռամսյակ	Լրամշակված գործիքակազմի կիրառում
7.	Ստուգվող դպրոցներից առնվազն 15-ում կրթական գործընթացի գնահատում	Կրթության որակի բարելավում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	II, IV եռամսյակներ	Լրացված գնահատման ձևաթղթեր, արդյունքների վերլուծություններ

						(յուրաքանչյուր եռամսյակի ավարտից 1-ամսյա ժամկետում)
8.	ՀՀ մարզպետարանի, համայնքապետարանի աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողության ընթացքում ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության ցուցաբերում (ՀՀ Արարատի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումներում)	Տարածքային և ՏԻՄ մակարդակներում կրթության կազմակերպման որակի բարելավում	ՀՎ	ԻԱՓՎ, ՌԳՍՊՎԳՎ	II, III եռամսյակներ	Տեղեկանք, ձևաթուղթ, գրություններ, վերագնահատված ռիսկերի բազաներ, վերլուծություն եռամսյակային և տարեկան հաշվետվություններում
9.	Ստուգումներ ՀՀ 28 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում	Կրթության արդյունավետ կազմակերպմանը (ներառյալ՝ ուսուցմանը, ուսումնառությանը) պառճառված վնասի հատկորոշում, հետևանքների վերացման ապահովմանը աջակցում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ, ՌԳՍՊՎԳՎ	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	Լրացված սուգաթերթեր, ակտ կամ տեղեկանք, գրություն, կարգադրագիր (անհրաժեշտության դեպքում), վերլուծություն եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, վերագնահատված ռիսկերի բազա
10.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին	Մշակված գործիքակազմ	ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	Հունվար, փետրվար	Մշակված գործիքակազմի

	մասնագիտական կրթության ոլորտների ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի որակի գնահատման գործիքակազմի մշակում					կիրառում
11.	ՆՄՄԿ ոլորտի առնվազն 6 հաստատությունում փորձարկում	Կրթության որակի բարելավում	ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	II, IV եռամսյակներ	Լրացված գնահատման ձևաթղթեր, արդյունքների վերլուծություններ (յուրաքանչյուր եռամսյակի ավարտից 1-ամսյա ժամկետում)
12.	Կանխարգելիչ, իրազեկման, խորհրդատվական միջոցառումներ	Իրազեկված կրթական միջավայր	ՀՀԿԲ	ՀՎ, ՆՄՄԿՎ, ԻԱՓՎ, ՌԳՍՊՎԳՎ	Ըստ կանխարգելիչ միջոցառումների տարեկան ծրագրի	Հաշվետվություններ
13.	Ստուգաթերթերի լրամշակում	Լրամշակված ստուգաթերթեր	ԻԱՓՎ	ՀՎ, ՆՄՄԿՎ, ՌԳՍՊՎԳՎ	I եռամսյակ	Լրամշակված ստուգաթերթերի կիրառում
14.	Վերահսկողական գործընթացի արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացման նպատակով ներկայացված հանձնարարականների և առաջարկությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (հետադարձ կապ), մեթոդական օգնության կազմակերպում	Կրթական գործընթացի կազմակերպման որակի բարելավում	ՌԳՍՊՎԳՎ	ԻԱՓՎ	Տարվա ընթացքում	Գրություններ, վերլուծություն, վերագնահատված ռիսկերի բազա

5. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող/ համակատարող	Գնահատման չափանիշ
1.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ՀՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ ՏԻՄ վերահսկողության, ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ ուսումնական հաստատությունների տնօրենների հետ հանդիպում-քննարկումների կազմակերպում պլանային և ըստ անհրաժեշտության՝ մայրաքաղաքում և մարզերում	Հանրության՝ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում և առկա խնդիրների որոշակի կարգավորում	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ	ՀՀԿԲ ԻԱՓՎ, ՀՎ, ՆՄՄԿՎ	Յուրաքանչյուր եռամսյակ 2 հանդիպում, դրանց լուսաբանում տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ԶԼՄ-ներում
2.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների լուսաբանում տարբեր ձևաչափերով	Հանրության իրազեկվածության և տեղեկացվածության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների մասին, հնարավոր խախտումների կանխարգելում	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ	ՀՀԿԲ	Եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն,որոնք հրապարակվել և տարածվել են ոչ միայն տեսչական մարմնի սոցիալական էջերում, այլև՝ ԶԼՄ-ներում, յուրաքանչյուր եռամսյակ 2 հարցազրույց տեսչական մարմնի ղեկավար կազմի հետ տարբեր թեմաներով, տեսչական մարմնի ղեկավարի մամուլի ասուլիս՝ առնվազն 2 անգամ տարեկան, այլ ելույթներ և մեկնաբանություններ՝ ըստ անհրաժեշտության

3.	Տեսչական մարմնի նոր կայքի ստեղծում	Տեսչական մարմնի անհատականացման միջոցների ապահովում և ճանաչելիության խթանում հանրության շրջանում	3-րդ եռամսյակ	ՀՀԿԲ	Տեսչական մարմնի պաշտոնական կայքի, սոցիալական էջերի թարմացումներ, ինչպես նաև՝ ԶԼՄ-ների միջոցով տարածում
4.	Տեսչական մարմնի գործող և նոր ստեղծվող կայքի և սոցիալական մեդիայի էջերի բովանդակային սպասարկում և զարգացում	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում՝ ժամանակակից մեդիա միջոցների կիրառմամբ	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ	ՀՀԿԲ	Կայքի և սոցիալական մեդիաէջերի բովանդակության պարբերական թարմացում, կայքում ներկայացվող նյութերի հասանելիությունն ապահովելու նպատակով համապատասխան հաշվետվությունների, աշխատանքային ծրագրերի, ստուգումների արդյունքների մասին տեղեկանքների, ստուգումների և գործողությունների ժամանակացույցի բովանդակության մշակում, տեղադրում և համակարգում
5.	«Թեժ գիծ» հեռախոսակապի միջոցով ստացված դիմում-բողոքների հիմնական թեմայի վերաբերյալ խորհրդատվական նյութերի պատրաստում և տարածում, ուսումնական հաստատություններում խորհրդատվությունների կազմակերպում	ԶԼՄ-ների ներկայացուցիչներին ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, անհրաժեշտության դեպքում հարցազրույցների և քննարկումների կազմակերպում «Թեժ գիծ» հեռախոսակապի միջոցով առավել բարձրացված հարցերի վերաբերյալ	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ	ՀՀԿԲ _____ ՀՎ, ՆՄՄԿՎ	Հաշվետվություն յուրաքանչյուր եռամսյակ ստացվող հարցումների և հանդիպումների մասին
6.	Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկման հանդիպում-խորհրդատվություններուսումնական հաստատությունների տնօրենների համար	Հաստատությունների աշխատակազմի իրազեկվածության բարձրացում	2-րդ եռամսյակ	ՀՀԿԲ _____ ԻԱՓՎ, ՀՎ, ՆՄՄԿՎ	Տեսչական մարմնի սոցիալական էջերում, ԶԼՄ-ներում հրապարակումներ, լուսաբանում:

7.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների հետ(երկու պլանային հանդիպում)	Հանրության ավելի ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում	2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ	ՀՀԿԲ _____ ՀՎ, ՆՄՄԿՎ	Երկու հանդիպում և դրանց լուսանբանում՝ տեսչական մարմնի առցանց աղբյուրներով և ԶԼՄ-ներով
8.	Իրազեկում-հանդիպումներ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ ստուգումների ընթացքում բացահայտված առավել հաճախ հանդիպող խնդիրների վերաբերյալ	Հաստատությունների աշխատակազմի իրազեկվածության բարձրացում և արձանագրված խախտումների կանխում	1-ին եռամսյակ 2-րդ եռամսյակ 3-րդ եռամսյակ 4-րդ եռամսյակ	ՀՀԿԲ _____ ՌԳՍՊՎԳՎ	Յուրաքանչյուր եռամսյակի ավարտին առնվազն 1 հանդիպում, դրանց լուսաբանում տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ԶԼՄ-ներով

Նշումներ (հապավումներ)՝

1. Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն (ՌԳՍՊՎԳՎ)
2. Հանրակրթության վարչություն (ՀՎ)
3. Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն (ՆՄՄԿՎ)
4. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն (ԻԱՓՎ)
5. Հանրության հետ կապերի բաժին (ՀՀԿԲ)
6. Որակի ապահովման բաժին (ՈԱԲ)
7. Հանրկրթական ուսումնական հաստատություն (ՀՈՒՀ)
8. Նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ)
9. Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ)
10. Տեղական ինքնակառավարման մարմին (ՏԻՄ)

6. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐ

Աղյուսակ 1

Տեսչական մարմնի հանրակրթության վարչության 2021 թվականի խորհրդատվական, իրազեկման (առկա/հեռավար) գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտներ Երևան / մարզեր	Անցկացման վայրը	Հանդիպման ժամկետը	Խորհրդատվության թեմաներ
1	Հանրակրթական ուսումնական հաստատություններ (ՀՈՒՀ)	Երևան / մարզ	Հունվարի 2-3-րդ տասնօրյակներ, Սեպտեմբերի 1-2-րդ տասնօրյակներ	ՀՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը, COVID-19-ը, արցախցի սովորողների խնդիրները և այլն) վերաբերյալ
2	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ (ՆՈՒՀ)	Երևան / մարզ	Փետրվարի 1-2-րդ տասնօրյակներ, Հունիսի 2-3-րդ տասնօրյակներ	ՆՈՒՀ ստուգաթերթերի, ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը, COVID-19-ը և այլն) վերաբերյալ
	ՀՀ Տավուշի մարզ			
3	Դիլիջանի համայնքապետարան (ՏԻՄ) և ՆՈՒՀ	Դիլիջան	Մարտի 2-3-րդ տասնօրյակ	ՏԻՄ վերահսկողության, ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ
	ՀՀ Սյունիքի մարզ			
4	Սիսիանի համայնքապետարան և ՆՈՒՀ	Սիսիան	Ապրիլի 2-3-րդ տասնօրյակ	
	ՀՀ Շիրակի մարզ			
5	Ախուրյանի համայնքապետարան և ՆՈՒՀ	Ախուրյան	Մայիսի 2-3-րդ տասնօրյակ	
	Երևան / մարզեր			
6	Ավագ դպրոցներում սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում	Երևան / մարզ	Նոյեմբերի 1-2-րդ տասնօրյակներ	Սովորողների և ծնողների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրազեկում

Աղյուսակ 2

Տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության 2021 թվականի խորհրդատվական, իրազեկման (առկա/հեռավար) գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտներ Երևան / մարզեր	Անցկացման վայրը	Հանդիպման ժամկետը	Խորհրդատվության թեմաներ
1.	ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերի, Երևանի նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	**Երևան/ կամ հեռավար/**	**I եռամսյակ**	• Տնտեսավարող սուբյեկտներին իրենց գործունեությանն առնչվող, տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում • Տնտեսավարող սուբյեկտների հետ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, կոնկրետ հարցերով խորհրդատվության մատուցում • Միջոցառումների արդյունքում օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկները (օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով) • ՀՀ-ում 2020 թվականի ընթացքում COVID-2019 հիվանդության իրավիճակով պայմանավորված ուսումնական հաստատություններում առաջացած խնդիրների վերհանում և քննարկում:
2.	ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	**Կապան/կամ հեռավար/**	**II եռամսյակ**	
3.	ՀՀ Տավուշի մարզի նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	**Իջևան/ կամ հեռավար/**	**III եռամսյակ**	
4.	ՀՀ Շիրակի մարզի նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	**Գյումրի/կամ հեռավար/**	**IV եռամսյակ**	